«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ. +374 93 65 55 81
URL : www.hetq.am

Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Լևոն Հովհաննիսյանին
HETQ.am-ի լրագրող Արեն Նազարյանից

(Էլփոստ՝ հեռ.՝)

Հարցում

Խնդրում եմ պատասխանել հետևյալ հարցերին.

«Հետք»-ի 2023 թվականի ապրիլի 17-ի հարցմանն ի պատասխան Երևանի քաղաքապետանից հայտնել են, որ Երևան քաղաքում 2021, 2022 և 2023 (հունվար-մարտ) թթ.-ին Կենտրոն վարչական շրջանում օրինականացվել է 9 ինքնակամ իրականացված կառույց (կցում եմ հիշատակված 9 որոշումը):

1. Ի՞նչպես են այս խնդրի դեմ պայքարում քաղաքային իշխանությունները և/կամ այլ լիազորված մարմիններ:
2. Ի՞նչ միջոցներ է ձեռնարկել Երևանի քաղաքապետարանը կից ներկայացված 9 հասցեներում ինքնակամ կառուցապատումը կանխելու, կառուցապատում իրականացրած սուբյեկտին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:
3. Քաղաքապետարանը օրինականացնելու համար հիմք է ընդունել, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, և կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցներն օրինականացնելու գործընթացում քննարկման առարկա դառնո՞ւմ են շենքի ճարտարապետական տեսքի փոփոխության հարցը, մայրաքաղաքի կենտրոնական փողոցների շենքերի տանիքների կառուցապատման և քաղաքային միջավայրի փոփոխման հարցերը:
4. Քաղաքապետարանի կողմից նշված ինը հասցեների շենքերի մեջ կան 20-րդ դարի առաջին կեսի կառույցներ (օրինակ՝ Զաքյան 10), արդյոք դրանց ձեղնահարկերում բնակելի ձեղնահարկի կառուցումը չի պարունակում սեյսմիկ վտանգներ և չի նվազեցնում շենքի սեյսմակայունությունը:

5. ՀՀ Կառավարության՝ 2004-ի հոկտեմբերի 7-ի որոշմամբ՝ Մաշտոցի 48 հասցեն ներառվել է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում: Այս հասցեի ձեղնահարկում ինքնակամ իրականացված կառույցը նույնպես օրինականացվել է՝ որպես բնակելի ձեղնահարկ: Ի՞նչու է որոշում կայացվել օրինականացնել հուշարձան շենքի ձեղնահարկում ինքնակամ կառուցված կառույցը, և ի՞նչու քաղաքապետարանը չի դիմել հարկադիր սերվիտուտի:

6. Ի՞նչպես է ստացվում, որ Կենտրոն վարչական շրջանի թաղապետարանի դիմացի շենքի (Տերյան 59) ձեղնահարկում ինքնակամ կառուցապատում է իրականացվում և դա ավարտելուց հետո կառուցապատողը դիմում է քաղաքապետարան և օրինականացնում այն, իսկ այդ ամբողջ կառուցապատման ընթացքում այն վրիպում է Կենտորն վարչական շրջանի թաղապետարանի աչքից:

7. Այս պահին նույնպես նմանօրինակ դեպքեր կան, երբ քաղաքացիները ձեղնահարկերում կառուցապատում են իրականացնում: Հնարավո՞ր է մինչ կառուցապատումը համապատասխան թույլտվություն ստանալ, թե ոչ, եթե այո, ապա ի՞նչ ընթացակարգով: Իսկ այժմ ձեղնահարկերում բնակելի ձեղնահարկեր կառուցելուց հետո հնարավո՞ր է դրանց օրինականացումը, եթե դրանք համապատասխանում են քաղաքաշինական նորմերին և կանոններին ու չեն խախտում այլ անձանց իրավունքները:

8. Այս ինը հասցեները օրինականացվել են ինքնակամ կառուցապատում իրականացրած անձանց դիմումների հիման վրա: Արդյոք քաղաքապետարանը սեփական նախաձեռնությամբ հաշվառում կամ հաշվառե՞լ է Երևան քաղաքի շենքերի վրայի ինքնակամ կառույցները, թե՞ ոչ:

Արեն Նազարյան 11 հուլիսի 2023թ.